

ազատք եւ այլ յոստանիկ մարդկանէ եւ յայրուծիոյ որերոյ՝ ճանաչող էք եւ կարող, եւ գիտէք հատուցանել զարժանն. բայց ես եւ որ ընդ իս ուխտապահ նախարարքն են, զոր ինչ ինկորեցաք ի քէն պատգամաւորաւք եւ գրելովքն, զոր եւ երէկ¹ եւ այսաւր դեմ յանդիման խաւսեցայ ընդ քեզ, եւ դու հրամանաւ Արեաց տեառնն եւ հրամանաւ ամենայն աւագանւոյ դրանն գրով եւ կնքով խոստացար տալ մեզ, առանց որոյ անհնար է կեալ մեզ եւ ծառայութիւն առնել ձեզ. հաւատոյ քրիստոնէութեան հաստատութիւն, մոգութեան եւ² ատրուշանաց յաշխարհէս Յայոց բարձումն, զեկեղեցւոյ ըստ մեր կամաց զպայծառութիւն եւ զպաշտաւն³, այդ որ կարելոր է մեզ եւ հարկաւորապէս պիտոյի՝ կնքով թագաւորին հաստատեա՝ մեզ. եւ այլ զոր ինչ⁴ գրեալ է ի նամակին՝ գիտես զամենայն, եւ ոչ ինչ է պիտոյ բազմաբանել առաջի քո: 20 Բայց յաղագս գահու եւ պատուոյ եւ շքեղութեան, հայելով յիւրաքանչիւր ուրուք վաստակս՝ տաջի՛ք անհոգութեամբ եւ մի՛ գրկիցէք»:

ԴԴ. Եւ զայս ամենայն խաւսեցեալ Մամիկոնենին Վահանայ՝ սիրով լսեր զամենայն Նիխոր, եւ ախորժելով յանձն առնոյր: 2 Խնդրէր Նիխոր ի Վահանայ զբնիկ Յայոց զայրուծին. «Կազմեա՛, ասէ, փութով եւ արծակեա՛ ի դուռն. քանզի Չարեհ որդի Պերոզի, ընդդիմացեալ Արեաց արարուածի՝ գունդ դեռ կազմեր ի կորուստ անձին իւրոյ եւ հաւանելոցն ընդ իւր. եւ դու փութա՛ արծակել զՅայ այրեւծի, որ նախ քան զքո երթալն ի դուռն՝ եւ սպաս մի քո մեծ ծանուցանի արարուածքդ առաջի թագաւորին եւ ամենայն Արեաց: 3 Վասն զի եւ ինձ հրաման ետ թագաւորն՝ վաղվաղակի մտանել ի դուռն. վասն զի աստուածք զայս իրս յաջող եւ բարերարութեամբ վճարեցին, զի եւս առաւել վաղագոյն երթամ անդր, ի դեպ է եւ պատշաճ»: 4 Եւ ուրախացեալ⁵ Նիխորոյ եւ Մամիկոնեանն Վահանայ⁶ առ միմեանս ոչ բազում ինչ աւուրս՝ կազմեր ստիպով⁷ գործոյն պիտոյից: 5 Յրաժարեալք ի միմեանց՝ չուէին խաղաղութեամբ, Նիխոր առ թագաւորն ի դուռն, եւ զաւրավարն Յայոց⁸ Մամիկոնեանն Վահան ի Դուին:

6 Եւ հասեալք յեզր գետոյն սաստկապէս ըստ ժամանակի իւրոյ պղտորութեանն, եւ զկամուրջն Արտաշատու գտին⁹ աւերեալ. եւ էր ինչ որ ի տե-

1 ՁԱտ. երէկ

2 Ձ. հոգութեան եւ

3 Ձ. զպաշտօնայր

4 Ձ. զայլ որ ինչ

5 Գտ. պատշաճ: Ուրախ...

6 Ձ. վահան

7 ՁԱտ. կամեր ստիպով. այսպէս ըստ ուղղագրութեան ԲԳտ.

8 ՁԱտ. այստեղ են գետեղում՝ «Եւ կազմեալ Մամիկոնենին Վահանայ... փողոտէին յանխնայ» հատուածը (ԴԴ 10-14). այսպէս ըստ դասաւորութեան ԲԳտ.

9 Ձ. գետին